



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 2 ՄԱՐՏ, 2020

## ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, րուր ինձ իմաստութիւն վբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

# ՍԱՂՄՈՍ 1

ԱՐԴԱՐՆԵՐՈՒ ԵՐԱՆՈՒԹԻԻՆԸ

Երանի անոր, որ ամբարիշտ մարդոց խորհուրդին չի հեպելիր, մեղաւորներու ապրելակերպը չ'ընդօրինակեր եւ վաստուած ծաղրողներուն հետ ընկերութիւն չ'ըներ. այլ՝ հաճոյք կ'առնէ Տիրոջ Օրէնքէն, եւ անոր Օրէնքը կը սերտէ գիշեր ու ցերեկ: Անիկա կը նմանի հոսող ջուրերու կողքին րնկուած ծառին, որ ճիշդ ժամանակին իր պտուղը կու տայ, եւ որուն րերելները չեն չորնար բնաւ. անոր բոլոր գործերը յաջողութեամբ կը պսակուին: Բնաւ այսպէս չեն ամբարիշտները. այլ՝ կը նմանին յարդին, որ հովը կը րարարունէ: Արոր համար ալ ամբարիշտները Աստուծոյ դատաստանէն պիտի չապարին. մեղաւորները արդարներու կարգին պիտի չդասուին. որովհետեւ Տէրը կը ճանչնայ արդարներուն ճամբան, մինչ ամբարիշտներու ճամբան վիրենք կորուստի պիտի տանի:

### ՇԱՐԱԿԱՆ-ԱՂՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
Վմենասուրբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:  
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:  
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւեն ես նեղելոց:  
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

**Պահապան ամենայնի Քրիստոս,**  
աջ րն հոպանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
եւ ողորմեա՛ րն արարածոց եւ ինձ բազմամեղիս:

# ՕՐՈՒԲԱՆ ՆԻԲԹԸ



## ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՄ ԵՐԵՄԻԱՅԻ

26 ԳԼՈՒԽ

### ԵՐԵՄԻԱ ԴԱՏԻ ԿԸ ԲԵՐՈՒԻ (26:1-24)

Քանի փակաին հարուածը չէ եկած, փակաին Տէրը կը շարունակէ Իր հայրական հոգածութեամբ խնայելու այս ժողովուրդին, որպէսզի փրկէ: Ահա փօնական օր մը պէտք է ըլլայ, ուր փարբեր շրջաններէ մարդիկ Տիրոջ փունը եկած էին երկրպագելու: Լաւագոյն առիթն է Աստուծոյ պարգաւը փոխանցելու երբ ամբողջ ժողովուրդը մէկտեղուած է առիթի մը պարգաւով: Ընդհանրապէս այդպիսի առիթներ լաւ են օգտագործելու որպէսզի Աստուծոյ պարգաւը փոխանցուի: Ահա նոյն նպատակով Տէրը կ'ըսէ Երեմիային. «Տիրոջ փունը երկրպագութիւն ընելու եկող Յուդայի բոլոր քաղաքներուն յայտնէ այն ամէն խօսքերը, որոնք քեզի պատուիրեցի անոնց ըսելու համար. խօսք մը զանց մի առնէր» (2 հմր): Տէրը յարակօրէն կը թելադրէ Երեմիա մարգարէին ըսելով. «ամէն խօսքերը յայտնէ առանց խօսք մը զանց առնելու»: Յաճախ կը պարահի, որ որոշ հարուածներ Աստուծոյ խօսքէն խիստ թուին, ցաւացնող, յանդիմանող, եւ կը փորձենք զանց ընել այդպիսի խօսքեր: Ահա Տիրոջ պարգաւն է, որ խօսք մը զանց չընես: Նոյն արտայայտութիւնը կը գտնենք Բ Օրինաց 4:2, 12:32 եւ Յայտն. 22:19, Աստուծոյ պատուիրաններուն վրայ ոչ մէկ բան աւելցնելու կամ պակսեցնելու կամ նոյնիսկ զանց ընելու: Այսպէս զանց ընելը, որպէսզի չըլլայ թէ հաճելի ուզէ թուիլ մարդկանց, կամ վախի պարգաւով ինքզինք փրկելու համար: Ուստի ամբողջ ճշմարտութիւնը յայտնելու:

Ինչո՞ւ: «Թերեւս մտիկ ընեն ու իրենց չար ճամբէն դառնան, եւ ալ զոջամ այն չարիքին համար որ անոնց չար գործերուն պարգաւով իրենց վրայ բերել կը խորհիմ» (3 հմր): Միթէ Աստուծոյ չի գիտեր կը դառնան կամ ոչ: Բայց այս ձեւը կ'որոշէր Աստուծոյ որպէսզի անով ցոյց տայ Իր արդարութիւնը, ողորմութիւնը եւ սրբութիւնը: Եւ առիթ ապաշխարութեան: Ինչպէս Պօղոս Առաքեալ մէկ այլ ուրիշ փարբերակով մը պիտի ըսէ. «Աստուծոյ համբերաբարութիւնը փրկութիւն համարեցէք» Աստուծոյ քաղցրութիւնը ապաշխարութեան կը հրաւիրէ մեզ (Հռոմ 2:4): Այսպէս հեղափոխական է արտայայտութիւնը «զոջամ», մանաւանդ երբ Աստուծոյ համար է որ կ'ըսուի: Կը նշանակէ մտադրութիւնը փոխել:

Այս պարգաւները փոխանակ քաջալերական պարգաւներ ըլլալու, ընդհակառակը քաղաքը կործանուելու ժողովուրդը կտորորուելու մասին է, որուն պարգաւով ալ քահանաները, մարգարէները եւ ամբողջ ժողովուրդը կու գայ ըսելու, թէ «Այս մարդը մեռնելու արժանի է, որովհետեւ այս քաղաքին դէմ մարգարէութիւն ըրաւ» (11 հմր): Այս վիճակը նախապիպը կը հանդիսանայ Քրիստոսի, որովհետեւ Քրիստոսի պարագային ալ Օրէնքի ուսուցիչները, Փարիսեցիները եւ այլք բոլորն ալ կ'ուզէին որ ալ մէջտեղէն վերնայ (Հմնպ Մրկ 14:58, Մտթ 26:61): Այնքան արեւն որ մարգարէն ամուր կառչած կը մնայ Աստուծոյ խօսքին վախ երբեք չունենար, եւ համարձակութեամբ կ'ըսէ, որ այս խօսքերը Աստուծոյ խօսքերն են, իմ խօսքերս չեն: Թէկուզ եթէ երբեք մտածեն սպաննել զինք, Տէրը զիս դրկեց: Ուստի Աստուծոյ է որ կը հնազանդի եւ ոչ թէ մարդոց: Անոր համար ալ մարգարէն ուրիշ բան չունի ընելիք եթէ ոչ այդ խօսքերը փոխանցելու ժողովուրդին: Ժողովուրդը ընդունի կամ ոչ, հաճելի թուի կամ ոչ:

Մի գուցէ մարգարէն մեռցնելով պահ մը լռեցնեն այդ ձայնը, սակայն, Երեմիա կու գայ յիշեցնելու, որ իրենց մեղքին վրայ ուրիշ մեղք մը աւելցուցած կ'ըլլան: Նոյնը պիտի ըսէին Քրիստոսի պարագային. «Անոր արիւնը մեր եւ մեր գաւակներուն վրայ» (Մտթ 27:25): Միւս կողմէ, մարգարէն, Պօղոս Առաքեալի բացաբարութեամբ, պարտաւորութիւնը ունի Աստուծոյ պարգաւը փոխանցելու. «վայ ինձի եթէ չփոխանցես» (Ա Կորնթ 9:16): Անտարբեր չի կրնար մնալ, իսկ որ փոխանցէ արդէն կը մտածեն զինք սպաննելու մասին, ու կը յիշեցնէ որ գգու ըլլան իրենց մեղքին վրայ ուրիշ մեղք մը չաւելցնելու համար:

Բայց ահա իշխանները լսելով մարգարէին խօսքերը, ըսին այս մարդը արժանի չէ մեռնելու: Երեւակայեցէք աշխարհիկ մարդիկ աւելի պարտաւորակամ կամ փրամադիր են չսպաննելու, քան քահանաներն ու մարգարէները, որոնք կ'ուզեն որ սպաննուի Երեմիա մարգարէն: Արդեօք այս երեւոյթը չի յիշեցնէր Քրիստոսի պարագան, երբ Պիղատոս փորձեց ազատ արձակել Քրիստոսը, մինչ Օրէնքի ուսուցիչներն ու Փարիսեցիները ըսին խաչը հանէ:

Երեմիայի ըսածը նորութիւն մը չէր, իրենէ առաջ Միքա մարգարէն ալ նոյնը ըսած էր, եւ ահա այդ պարգաւին լոյսին փակ կու գան այն եզրակացութեան որ Երեմիայի ըսածները ճշմարտութիւն են: